ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 8 ՅՈՒԼԻՍԻ 1881 № 129

№ 129 - ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 8 ՅՈՒԼԻՍԻ 1881

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի և տօնի օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ։

Խմբագրատանը բաց է ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Ստորագրողները դիմում են ուղղակի խմբագրութեան հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

Խմբագրութեան ուղղած թէ՛ յօդուածները և թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները և պահում է երկու ամիս մինչև ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին $1^1/_2$ կոպէկ։

Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը և պ. Շահփիրդեանի պավիլիօնում։

Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ.

«Մեղու Հայաստանի» լրագրին կարելի է ստորագրվել վեցամսով յուլիսի 1-ից մինչև միւս տարուայ յունվարի 1-ը. վճարն է 6 ռուբլի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Ազգային.—Թղթակցութիւն Ախալցխայից.
Քաղաքական.—Քաղաքական տեսութիւն.—Քաղաքական լուրեր.
«Մեղուի» հեռագիրներ.
Մանր լուրեր.
Յայտարարութիւններ.
Բանասիրական.— Գրիբոեդովի «Խելքից պատուհաս» կոմէդիան հայկական բեմի վերայ.

ԱԶԳԱՅԻՆ

ԱԽԱԼՑԽԱՅ

1 յուլիսի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Անցեալ տարի Եղիաբեթեան ուսումնարանի տասնամեայ յոբելեանը կատարելից յետոյ հոգաբարձութիւնը ձեռնամուխ եղաւ այդ ուսումնարանում բաց անել մի արհեստագիտական դասարան։

Ուսումնական վարչութիւնը ի դէմս պ. Բարխուդարեանցի (Թեմական վերատեսուչի) ջերմ համակրութեամբ ընդունելով այդ միտքը իւր կողմից ամեն միջոց ի գործ դրեց և անցեալ տարի սեպտեմբեր ամսից արհեստանոցը բացուեցաւ քսան և չորս աշակերտուհիներով։ Ի պատիւ այդ աշակերտուհիներից կարգաւորների ծնողներին պէտք է ասել, որ դոքա ևս իրանց հերթում նիւթական մեծ զոհաբերութիւն արին և այդպիսով լրացաւ 2200 ռուբլի գումարը, որը հոգաբարձութիւնը յատկացրել էր Թիֆլիսից եկած ձեռագործի ուսուցիչ և ուսուցչուհի այր և կին Անեանցներին։ Համաձայն հոգաբարձութեան հետ դրուած դաշնագրին յունիսի վերջերում կայացաւ արհեստանոցի աշակերտուհեաց հարցաքննութիւնը ի ներկայութեան թէ՛ տեղիս արհեստաւորների միջից ընտրուած էքսպերտների և թէ՛ Տփխիսից յատկապէս հրաւիրուած էքսպերտի, որ էր Թիֆլիսի արհեստագիտական վարչութեան էքսպերտ պ. Պաւել Կամգրելիձէն։ Մենք ներկայ էինք բոլոր ժամանակ հարցաքննութիւններին և ամենամեծ գուարճութեամբ տեսնում էինք, թէ ինչպէս յաջող և գիտակցական կերպով պարոն և տիկին Անեանցների աշակերտուհիները թէ՛ տեղական և թէ՛ եւրոպական կանացի զգեստների (սկսեալ ամենահասարակից մինչև բարդ շորերը) չափսեր էին վեր առնում, ձեւում, կարում, բացատրութիւններ և մեկնութիւններ տալիս, գիտմամբ սխալ առաջարկուած հարցերը ուղղում, գիտմամբ սխալ ձեւուած և կարուած շորերը կարգաւորում, կանոնի ձգում, այնպէս որ մեր արհեստանոցի աշակերտուհիք (բացառութեամբ երկուքին) ձեռագործը թէ՛ տեսականապէս և թէ՛ գործնականապէս սովորել էին, ինչպէս այդ մասին գրաւոր կերպով վկայեցին և բոլոր էքսպերտներն։ Նկատելի է, որ պ. Անեանցը և իւր Շուշան (Սանդուխտ) կինը ձեռագործը աւանդել էին աշակերտուհեաց ինչպէս մի գիտութիւն, որտեղ մնում էին թուաբանութեան, գծագրութեան և մաթեմատիկայութեան վերաբերեալ հարկաւոր տեղեկութիւնները։ Մի տարուայ ընթացքում այդքան յառաջադիմութիւնը բացատրվում է մի կողմից ուսուցչի մեծ հմտութեամբը, միւս կողմից նորա և նորա աշակերտուհիների տաղանդով, կարելի է ասել, չափազանց աշխատութեամբը։ (Արհեստանոցում աշակերտուհիք իւրաքանչիւր օր պարապում էին չորս ժամ բացի երբեմն երբեմն վարժարանում եղած պարապմունքներից)։ Շնորհակալութիւն պ. Անեանցին իւրան բարեխիղճ աշխատութեանը համար։ Եթէ Եղիաբեթեան ուսումնարանի արհեստանոցը շարունակուի նոյն ուղղութեամբ, ինչ ուղղութեամբ որ սկսուեցաւ, համարձակ կարելի է ասել, որ այդ ուսումնարանը իւրան սանուհիներին չափաւոր ուսման հետ կը տայ նաև չափաւոր հաց։ Այդ բանը շատ լաւ հասկացել էին կարծես աշակերտուհեաց ծնողները և այն բազմաթիւ հանդիսականները, որոնք ներկայ էին լինում հարցաքննութեան և որոնք հարցաքննութիւնների վերջացած օրը երեկոյեան ժամը 9-ին միահամուռ ոտքի կանգնելով յայտնեցին իրանց շնորհակալութիւնը, որոց հարկաւոր էր։ Ժողովականաց խնդրանօք նոյն րոպէին Նորին Վեհափառութեան կաթուղիկոսի համար, իբրև հայկական ուսումնարանների պաշտպանին, բարեմաղթութիւններ և համակրութեան ցոյցեր եղան։ Բոլոր հանդիսականք ոտքի կանգնած առանձին ուրախութեամբ լսեցին «Ով զի չքնաղ» երգը, որ Նորին Օծութեան համար շինուած է։ Երգից յետոյ «կեցցէ Նորին Վեհափառութիւնը» արտաբուղխ ձայները երկար ժամանակ չէին դադարում։ Ժողովրդեան պահանջմամբ Թեմական վերատեսուչը և հոգաբարձութիւնը երախտագիտութեան հեռագիր ուղղեցին նոյն րոպէին առ Նորին Օծութիւնը և ուսումնարանի հիմնադիր գերապատիւ Սուքիաս եպիսկոպոս Պարզեա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԲՈԵԴՈՎԻ «ԽԵԼՔԻՑ ՊԱՏՈՒՀԱՍ» ԿՈՄԵԴԻԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՄԻ ՎՐԱՅ.

Այս վերնագրով մի քննադատական յօդուած դուրս եկաւ «փորձի» փետրվար ամսի տետրակի մէջ, որը մեր հետաքրքրութիւնը շարժեց լոկ հետևեալ պատճառներով։

Նախ՝ առաջին անգամն է, որ մենք հանդիպում ենք օտար մատենագրութեան մէջ յայտնի գրքի հայերէն թարգմանութեան վերայ քննադատութեան փորձին «փորձի» մէջ. Երկրորդ՝ առաջին անգամն է, որ հայոց ներկայացումների մասին [illegible] է գրվում «փորձի» մէջ և երրորդ՝ թարգմանութիւնը, հայոց լեզուն, հայ ներկայացումները «փորձի» մէջ քննողը համդիպանում է մի վրացի իշխան։ Գրիբոեդովի թարգմանիչը կարող է պարծենալ, որ «փորձ» ամսագրին մի կրիտիկոս շնորհեց, թէպէտև վրացի, բայց ինչ փոյթ, որտեղ շնորհք կայ, պէտք է այնտեղից օգուտ քաղէ խմբագիրը։

Կարդանք, տեսնենք թէ ինչ է ասում պ. Էրիսթովը։ Բայց ներեցէք, ընթերցող, հէնց սկզբումը «փորձի» խմբագիրը մեզ կանգնեցնում է, չէ թողնում, որ կարդանք. առաջ իրան պէտք է լսենք, այսպէս է նորա կամքը։ Որպէս զի մի գուցէ նորա «կրիտիկոսի» գրածը սխալ հասկանանք, «փորձի» խմբագիրը հարկաւորութիւն է զգում իւր «կրիտիկոսի» վրայ ինքը առաջ կրիտիկա անելու։ Նա ասում է իւր ծանօթութեան մէջ.—

«Պարոն յօդուածագիրը (Էրիսթովը) տեղական համակրելի և սրամիտ բանաստեղծներից մէկը, հիմնաւորապէս ուսումնասիրած է Գրիբոեդովի կոմէդիան (մինչ, այդ կը տեսնենք թէ որքան ճշմարիտ է) և յայտնի է ռուս գրականութեան մէջ իւր հետազօտութիւններով այդ բանաստեղծի կեանքի և գրուածքների մասին։ . . .

Զարմանալի ձև է բռնում «փորձը»... փոխանակ թողնելու, որ ընթերցողը առաջ կարդայ յօդուածը և նրա համեմատ գնահատէ յօդուածագրի արժանաւորութիւնը, ինքը այս գլխից սախպում է ընթերցողին, որ նա ընդունէ «փորձի» մէջ տպած յօդուածը անպայման, իբրև մի երևելի գրչից բղխած բան, և այս ամենը ինչու համար—որովհետև «փորձն» է ասում։ Կարծում ենք, որ այդ շատ քիչ է, բայց շարունակենք ծանօթութիւնը։

«Որպէս զի յօդուածը ցանկալի լիակատարութիւն ունենար՝ (մեզ համար դժուար է իմանալ՝ որտեղից է յօդուածը անկատարութիւնից լիակատարութեան անցնում) մենք մի կողմից մի քանի (հետաքրքիր է իմանալ—«փորձի» մէջ ո՞ր երրորդն է կոչվում «մի քանի») լեզուին վերաբերեալ լրացուցիչ (սա դեռ չը բացատրեց «մի քանի»-ին) նկատողութիւններ աւելցրինք, որովհետև պ. Էրիսթովը անտեղեակ է հայերէն լեզուին» . . .

Արի ու ցնծից հանիր։ Թարգմանութեան, հայերէն ոտանաւորի, հայոց լեզուի վերայ է գրած կրիտիկան, իսկ կրիտիկոսը չը գիտէ հայերէն։ Թող ընթերցողը չը վհատի... «փորձը» ամօթից իւր մերկացած խիղճը քողարկելու և ընթերցողին մխիթարելու համար՝ վերջացնում է՝ «Թէև նրա մայրը հայ է եղած»։

Լեզուդ սիրեմ, «փորձ»... հիմա ընթերցող, ինչ հասկացար—ով է այս յօդուածի, այս մատուր ծնունդի հայրը կամ մայրը, որովհետև երեք հոգի են հանդիսանում—պ. Էրիսթովը, «փորձի» խմբագիրը և այս վերջինի ասելով առաջինի մայրը։ Որեմն «cherchez la paternité»-ի օրէնքին հետևելով՝ մենք տարակուսանքի առաջ իրաւունք ունենք և մեզ արդէն չի զրկիլ «փորձը» այդ իրաւունքից ընդունելու իբրև յօդուածի հեղինակը «փորձի» խմբագրին։ Որեմն կարդանք յօդուածը. յոյս ունենք, որ այսուհետև այլ ևս մեզ չի խանգարիլ «փորձի» խմբագիրը այդ անելու։

Որչափ որ զարմանալի է, այնչափ և անհերքելի ճշմարտութիւն է, որ մանկութեան ժամանակ ստացած տպաւորութիւնները, նախապաշարմունքները, տեսածների ներգործութիւնները մնում են մարդուս հոգու մէջ գրեթէ մինչև նորա կեանքի վերջը։ Մանուկը ուսմամբ զարգանում է և մինչև անգամ փիլիսոփայ է դառնում, բայց և այնպէս նա շատ անգամ ի զուր է կռվում մանկական հասակի մէջ ստացած զօրեղ տպաւորութիւնների դէմ, նրանք շարունակում են այդ հասակը անցած մարդու հոգու մէջ իրանց իշխանութիւնը։ Մեր երիտասարդներից շատերը ուսումնարաններում անցնելով գրականութեան ուսումը՝ իբրև օրինակներ սովորում են, և համարեա անգիր են անում Գրիբոեդովի և սրա նմանների գրուածքներից։ Ուսումնարաններից դուրս գալով՝ այդ երիտասարդները մնում են արդէն ստացած տպաւորութիւնների տակ, որոնք աւելի ազդու են լինում՝ քանի որ չեն ծանօթանում աւելի լաւ գրականութեան հետ։

Յօդուածը ասում է.—

«Այդ երեկոյ հայ դերասանների մշտական խումբը ներկայացրեց Գրիբոեդովի անմահ կոմեդիան»։

Մենք չենք հասկանում պ. յօդուածագիրը «անմահ» բառը ինչի տեղ է ընդունում . . . չենք հասկանում նոյնպէս թէ այդ կոմէդիայի մէջ ինչ բան կայ արդեօք անմահութեան արժանի։ Արդեօք նրա մէջ յայտնած ինքնուրոյն մտքերը, կեանքի վերայ ձգած նոր հայեցողութիւնները, արդեօք մարդկութեան հոգին ու միտքը բարձրացնող և ոգևորող աստուածային վսեմ զգացմունքները և նրանց նուրբ արտայայտութիւնները, թէ ընդհանուր մարդկութեան համար հետաքրքիր բնաւորութիւնների ճիշդ և գեղեցիկ նկարները . . . Արդեօք դրանցից մէկը կայ այդ «անմահ» կոչուած կոմեդիայի մէջ, շնորհակալ կը լինենք՝ եթէ մեզ մատնացոյց անեն։ Մեր կարծիքով կոմէդիայի միակ նշանաւոր կողմը՝ նրա ոտանաւորի չափակցութիւնը, խօսքերի մեղմ և ամփոփ դասաւորութիւնը և յանգերի կանոնաւոր ու յաջող ել և էջերն են, բայց այդ էլ կարող է միայն բուն ռուսին կամ բոլորովին ռուս գրականութեան նուիրուածներին հետաքրքիր անել, ինչպէս գրաբարականները կարող են պարծենալ հայր Բագրատունու «Հայկ Դիւցազնով», որի մէջ հայոց լեզուի ճոխութիւնն է երևում և այնչափ էլ երևելի է, որ շատ բան չի հասկացվում ինչպէս Գրիբոեդովի կոմէդիան շատ տեղերում մութ է։ «Անմահ» անունը տալիս են այնպիսի բանաստեղծներին, ինչպիսի են Շէքսպիր, Գէօթէ, Շիլլեր, Բայրոն և այլն, ու ոչ թէ մի որևիցէ Գրիբոեդովին։ «Անմահ» պօէմները նրանք են, որոնց հեղինակութիւնները ամեն անհատի, ամեն ազգի համար ըմբռնելի են և ամեն ազգ պարծանքով նրանց իր սեփականը։ Ցաւ է մեզ ասել, որ ինչպէս բոլոր հարցաքննութիւններից, նոյնպէս և այդ հանդէսներից իսպառ բացակայ էր քաղաքիս յաջորդ կոչուած Սագինեան Գրիգոր արքեպիսկոպոսը, որի ծառան այդ օրերումը մեծ ջերմեռանդութեամբ քաղաքի սրճարաններում և փողոցներում ձրիաբար ժողովրդին բաժանում էր «սուրբ Էջմիածնի զանգակը» անունով ինչ որ մի բրօշիւր, բայց ճշմարտութիւնից չը շեղուելու համար այս էլ պէտք է ասած թէ Սագինեան եպիսկոպոսը Վարդանեան ուսում. հարցաքննութիւններին միշտ ներկայ էր։

Բ—նե․

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ․

XIV

(Շարունակութիւն *).

Մենք հիմա այս յօդուածումը անցնենք Իտալիայի դրացի մեծ պետութեան — Աւստրիա-Ունգարիային։ Աւստրիան իւր ներքին կազմակերպութեամբ բոլորովին տարբերվում է միւս յիշած մեծ պետութիւններից։ Ինչպէս Աւստրիան գերմանական պետութիւն էր, որին հպատակում էին շատ զանազան ցեղերի և լեզուների պատկանող ժողովուրդներ։ Արդէն Աւստրիա բառը բուն գերմաներէն կոչվում է—Oesterreich, այսինքն արևելեան հարստութիւն կամ թագաւորութիւն։ Դա հին ժամանակներում կազմուեցաւ յօգուտ գերմանական ցեղի, որի գլխաւոր նպատակն էր պաշտպանել Գերմանիան արևելքից եկող վայրենի, բարբարոս ցեղերի դէմ։ Աւստրիայի կայսերական ցեղը Եւրոպայի ամենահին իշխանական ցեղից է։

Հին, խաւար, բռնութեան վերայ հիմնած օրէնքների տակ ճնշվում էին այդ պետութեան հպատակ զանազան ազգերը, և իւր մեծութեան և ույժի վերայ հիմնած Աւստրիայի կայսերական տունը, Հաբսբուրգները ուղղակի ներգործում էին և միջամտում էին Գերմանիայի գործերում և գերմանական դաշնակցութեան մէջ առաջին տեղն էին բռնում և նրանց ձայնը վճռող էր։ Այդ խաւարի, պապականութեան, եզուիտութեան, բռնակալութեան, ամեն ազատ միտք սպանող ոգին միանգամայն տիրում էր թէ՛ Աւստրիայի մէջ բնակուած զանազան ազգերի վերայ և թէ՛ գերմանական դաշնակցութեան մէջ բնակվող գերմանական ազգի վերայ։ Նոյն իսկ ներկայ դարուս առաջին մասումը Աւստրիայի կառավարութիւնը հետևվում էր իշխան Մէտերնիխի մաքիավէլլական քաղաքականութեամբ։ Ամեն բան, ամեն ազգ, ամեն ժողովուրդ, մամուլ, ազատութիւն, լեզու ճնշուած էր Աւստրիայում խիստ և բռնի օրէնքների տակ։ «Բաժանիր, որ տիրես» սկզբունքին հետևելով՝ աւստրիական կառավարութիւնը հըպատակ ազգերին միմեանց դէմ էր կանգնեցնում, միացածը լրացնում էր պապականութիւնը և նրա հաւատարիմները։ Այդ տեսակ կառավարութեան առաջին հարուածը տուաւ 1848 թուի յեղափոխութիւնը, որ շատ բան թէպէտև կիսատ, բայց և այնպէս փոփոխութեան ենթարկեց։ Այդ յեղափոխական ոգին, որ այն ժամանակը տիրում էր ամբողջ արևմուտքումը, թէպէտև ճնշուեցաւ, բայց չը մեռաւ։ Միշտ բռնակալաբար կառավարուած պետութիւնները այն ժամանակ միայն խելքի են գալիս և դէպի լաւը փոխվում, երբ դրսից հարուածներ են ստանում, երբ արտաքին թշնամու հետ պատերազմելով ջարդվում են։ Պատմութեան մէջ օրինակներ շատ կան։ Այսպէս Աւստրիան այս դարուս մէջ, որչափ էլ որ նրա զօրքը թշնամու դէմ քաջութեամբ պատերազմում էր, և սակայն երկու արտաքին պատերազմներում անյաջողութիւն ունեցաւ, և դրանով ստիպուած էր ներքին քաղաքականութեան մէջ զիջողութիւններ անել հպատակ ազգերին։

Այսպէս էր 1859 թուի իտալական պատերազմից յետոյ։ Այսպէս էր և 1866 թուին, երբ Աւստրիային յաղթեց Պրուսիան և դուրս ձգեց նրան Գերմանիայից և գերմանական դաշնակցութիւնից։ Գերմանիայից արտաքսուած Աւստրիան հաւաքեց իւր ույժերը և սկսաւ ուրիշ նոր, ազատ հիմքերի վերայ կազմակերպուել և ծառայել իրեն յատուկ և բնական նպատակներին։ Սաքսոնիայի (գերմանական մի պետութիւն) առաջին պաշտօնեայ բարօն Ֆօն-Բօյստը, առաջին և ընդունակ ախոյեանը և հակառակորդը Բիսմարկի այլ և անկարող գործելու Գերմանիայում, 1866 թ. պատերազմից յետոյ նշանակուեցաւ առաջին պաշտօնեայ Աւստրիայի կայսրութեան մէջ։ Աւելի սիրով նշանակեց կայսրը դրան այդ պաշտօնում, որովհետև այն ժամանակ կայսերական արքունիքը Պրուսիայի դէմ վրէժ խնդրութեան մտքից չէր հրաժարուել։

Աւստրիայի հպատակ ազգերից ամենազօրեղը ունգարացիները, վաղուց է, որ պահանջում էին Աւստրիայից իրենց կորցրած Ստեփան թագաւորի թագը, սպառնում էին բաժանուել բոլորովին Աւստրիայից, եթէ Աւստրիայի կայսրը չի տալ նրանց այնպիսի ինքնավարութիւն, որով իրենք ամենայն կերպ, իբրև մի ազատ ազգ, սեպհական կառավարութիւնով ապրեն։ Բարօն Ֆօն-Բօյստի առաջին գործն էր Ունգարիան հաշտեցնել և համաձայնեցնել Աւստրիայի հետ։ Նա գլուխ բերեց այդ համաձայնութիւնը. Աւստրիայի կայսրը յատուկ օծվեցաւ իբրև Ունգարիայի թագաւոր. Ունգարիան ստացաւ իւր սահմանադրութիւնը յատուկ օրէնքներով կապուեցաւ Աւստրիայի հետ։ Եւ այդ ժամանակից վերջը Աւստրիան փոխեց իւր անունը և դառաւ Աւստրիա-Ունգարիա։ Բարօն Ֆօն-Բօյստը ստացաւ կոմսութեան տիտղոսը։

Բնականաբար զարթեցրեց Ունգարիայի դրութիւնը միւս հպատակ ազգերի մէջ նախանձ, որը մինչև օրս շարունակվում է և Աւստրիա-Ունգարիային տատանման մէջն է ձգում։ Չեխերը, լեհացիները, դալմատացիները, սլաւոնները և այլ և այլ միևնոյնն են պահանջում, և կառավարութիւնը, պարլամենտը մեծ մասամբ այդ վէճերումն է պարապած։ Ինչպէս տեսնում ենք Աւստրիա-Ունգարիայի ներքին կազմուածքը խիստ նուրբ և խճճուած է, այնպէս որ շատ հեշտ կարող է վտանգների ենթարկուել։ 1870 թուին արդէն հասկացաւ նա, որ Պրուսիայի դէմ վրէժխնդրութիւնը իրեն էլ օգուտ չի բերել և պէտք է որ նա միանգամից իւր անցեալին մնաս բարև ասէ, և հետևէ Բիսմարկից նախագծած քաղաքականութեան։ Իսկ Բիսմարկի քաղաքականութիւնն է—Աւստրիա-Ունգարիային դէպի արևելք մղել և ճանապարհ տալ նրան այնտեղ մեծանալու, զարգանալու և սլավեան ցեղերը Աւստրիա-Ունգարիայի ձեռքը գցած պահել։ Ուրեմն Աւստրիայի քաղաքականութիւնը և շահերը պահանջում են, որ որչափ որ կարելի է եւրոպական պետութիւնների հետ բարեկամ մնայ, մանաւանդ Գերմանիայի հետ, եւրոպական պատերազմի ժամանակ չէզոք մնայ, աշխատէ Թիւրքիայի մէջ status quo պաշտպանել, որքան որ կարելի է, և թէ չի լինում, այնպէս անէ, որ այդ կողմերի երկիրները իւր ազդեցութեան տակ ձգէ։ Բնականապէս այդ ճանապարհի վերայ Աւստրիայի գլխաւոր, առաջին և վտանգաւոր մրցողը Ռուսաստանն է։ Ռուսաստանը իբրև սլավեան ցեղերի ճանաչուած գլուխ և առաջնորդը ձգտում է սլավեան ցեղերի անկախութեանը, իսկ Աւստրիայի գոյութիւնը հէնց նրա մէջն է, որ այդ սլավեան ցեղերը իւր իշխանութեան և ազդեցութեան տակ մնան։ Այդ պատճառով ամեն միջոց գործ է դնում գրաւել այդ ազգերը և իւր ազդեցութեան ենթարկել։ Աւստրիան նոյնպէս աշխատում է քանի կարելի է Դանուբ գետը իւր բացարձակ ազդեցութեան տակ ձգել և իւր դիտումներումը մինչև այսօր Գերմանիայի օգնութեամբը յաջողութիւն է ունեցել։ Աւստրիային վտանգ սպառնում է բացի Իտալիայից, գլխաւորապէս և առանձնապէս Ռուսաստանից։ Այս վերջին տէրութեան շահերը արևելեան խնդրի վերաբերմամբ, ինչ եւրոպական մասին է վերաբերում, բոլորովին հակառակ են աւստրիականին։ Աւստրիա — Ունգարիան իւր դիրքով իւր վիճակով և պետական շահերով կախուած է Գերմանիայի քաղաքականութիւնից։ Աւստրիան, ինչպէս միւս մեծ պետութիւնները, թէ ո՛չ այնքան, որքան Անգլիան, ունի իւր առևտրական շահերը արևելքում, նա էլ չէր կամենալ, որ Հայաստանը եթէ Թիւրքիայի ձեռքից դուրս գալու լինի, անցնի մի որևիցէ մեծ պետութեան ձեռքը, մանաւանդ որ լաւ գիտէ, որ այդ մեծ պետութիւնը ինքը չէ

նութիւնն է համարում.

Յօդուածը շարունակում է.—

«Մեր մէջ բնականապէս հարց է զարթնում թէ ինչո՞ւ ոչ մի եւրոպական բեմ չի փորձել ներկայացնելու այդ գրուածքը»։

Մենք կը պատասխանենք. Որովհետև բեմական կէտից այդ կոմէդիան անշահ, անպէտք է, որչափ էլ լաւ ներկայացնէր, այնուամենայնիւ ձանձրալի է նա։ Եւ ճշմարիտ, անտանելի է ժամերով նստել թատրոնական դահլիճում տեսարաններ կուլ տալ, միայն նրա համար, որ Չացկին խօսէ, ամեն տեղ իւր ծամած, հաւաքած մօնօլօգները։ Միթէ մարդ մենակ իւր տանը նստած աւելի հեշտութեամբ չի կարող ծանօթանալ այդ մօնօլօգների հետ, եթէ կամենում է նա այդ։ Կոմէդիայի հերոսը Չացկին է։ Միթէ նա բնաւորութեան տէր մարդ չէ, կարակտէր ունի, կարող է իրան շրջապատող հասարակութեան վրայ ներգործել, ազդել։ Ամենևին ոչ։ Մի մարդ, որ Մոլչալինի սիրուհուն՝ յիմար Սօֆիային է սիրում, մի մարդ, որ ինքն իրան հակառակելով մոռանում է ամեն տեղ պատեհ թէ անպատեհ ժամանակ իւր մօնօլօգները ասելու—նա ծաղր է յարուցանում, աւելի ոչինչ։ Ճշմարիտ, խղճալ կարելի է Չացկու վրայ... որպիսի յիմար դրութիւնների մէջ է գցում նրան հեղինակը։

Ինչ վերաբերում է կոմէդիայի միւս անձինքներին՝ ճշմարիտ, որ հեղինակը նրանց տաղանդով է դուրս բերել։ Դրանք ամենքն էլ հեղինակի ժամանակակից, մօտիկ անձերի, ազգականների նկարագիրներն են, որոնք ներկայացնում են Մօսկվայի այն ժամանակուայ կեանքի տիպերը և իբրև բնաւորութիւններ՝ մեզ վրայ այնչափ ազդեցութիւն են թողնում հիմա, որչափ որ մի թանգարանում կախած պատմական հագուստները։ Մի Սունդուկեանցի կեանքից առած տիպերը ոչնչով պակաս չենք համարում Գրիբօեդովի տիպերից, թէպէտև պ. Սունդուկեանցը արձակ է գրել։ Վերցրէք Արութինը, Կակուլին և այլն, դրէք դըրանց Ֆամուսովի, Մոլչալինի, Ռէպէտիլովի և այլն մօտ և համեմատեցէք—կը տեսնէք, թէ որչափ կենդանի են պ. Սունդուկեանի տիպերը և յետ չեն մնում Գրիբօեդովի տիպերից։

Յօդուածը շարունակում է.—

«Միթէ չը գտնուեցան աւելի տաղանդաւոր մարդիկ քան պ. Տէր-Աստուածատրեանը (որի գրականական գործունէութիւնը մինչև այժմ անյայտ է մնացել ընթերցող հասարակութեան *), որոնք կարողանային «Խելքից Պատուհասը» փոխադրել մի ուրիշ լեզուի»...

Այդ հարցին հէնց ինքը յօդուածագիրը պատասխանում է այսպէս—«Ո՛չ մի մատենագիր չէ փորձել անելու այդ, ոչ ոք այնքան համարձակութիւն ունեցած չէ, որովհետև «Խելքից Պատուհասը» անկարելի է թարգմանել»։

Այս տողերը գրում է «փորձը», այն էլ մի այնպիսի կրիտիկոսից, որ «հիմնաւորապէս ուսումնասիրած է» Գրիբօեդովի կոմէդիան և «յայտնի է ռուս գրականութեան մէջ»։

Եթէ «փորձը» շնորհքով աղքատ է, գոնեա մի քիչ համեստ լինէր և չը գիտցած բանի վերայ չը խօսէր։ «Խելքից Պատուհասը» արդէն թարգմանուած է զանազան լեզուներով, այն էլ վաղուց, այն ժամանակներում, երբ ոչ «առևտրական բանկը», ոչ «փորձը» և ոչ էլ նրա խմբագիրը գոյութիւն ունէին *)։

Գերմաներէն թարգմանութիւն.— «Russische Ribliothek für Deutsche» Von Karl von Knorring. Rebal 1831. «Leiden durch Rildung». Lustspiel in vier Aufzügen, aus dem Russischen des Gribojedow»։ Ուրեմն առաջին թարգմանութիւնը 1831 թուին։

Դարձեալ մի ուրիշ գերմանական թարգմանութիւն, որ տպուել է Լէյպցիգում 1838 թուականին.— «Verstand schafft Leiden», Schauspiel in vier Acten und in Versen nach dem Russischen des Gribojädoff metrisch übertragen von Dr. Bertram. Leipzig, in Commission bei F. A. Rrockhaus. 1853.

Լեհական թարգմանութիւն.— «Riada temu kto ma rosum». (Горе отъ ума). Komedya w cztérech aktach, wierszem napisana przéz A. Gribajedówa. Tunaczy polskim wierzem Iosef—Lewart-Lewinski. Varszawa. Henryk Natavson 1857.

Անգլիական լեզուով թարգմանութիւնը լոյս է տեսել Լոնդօնում այսպէս.— «Gore ot ouma» a comedy from the russian of Gribojedoff travslated by Nichalos Benardaky. London. Simpkin, Marshell et. C·o. (1857).

Ֆրանսիական լեզուով թարգմանել է Սէն-Մօրը (St. Maur 1858 թուականին՝ միայն III և IV-րդ գործողութիւնները։

Վրացերէն թարգմանութիւն.— Ինչպէս յայտնուած է Գարուսովի հրատարակութեան «Горе отъ ума»-ի քննութեան մէջ՝ Գրիբօեդովի կոմէդիան թարգմանուած է և վրացերէն, որի թարգմանիչն է Մօսկվայի համալսարանի կանդիդատ պ. Ծխնամծղարովը։

Ուրեմն եթէ մենք առանց Գրիբօեդովի «հիմնաւորապէս ուսումնասիրած» անունը մեզ վերայ կրելու մի քիչ աւելի հետևենք՝ դուցէ դեռ ուրիշ շատ թարգմանութիւններ էլ գտնենք. բայց հրապարակաւ պէտք է վկայենք, որ այդ էլ մեծ բան է, որ «փորձը» կարողացել է գոնեա հայերէն թարգմանութիւնը գտնել։

Կարծում ենք, որ այս փաստերը բաւականին լաւ կարող են տալ «սրամիտ բանասէրին» և սրա փաստաբան խմբագրի գրականութեան մէջ ունեցած հմտութեան վերայ, բայց շարունակենք։ Յօդուածը ասում է.

Այս կոմէդիան սկզբից մինչև վերջը ռուսական է, լի հիանալի դարձուածքներով, որոնց թարգմանելը օտար լեզուով անկարելի է», և իբրև ապացոյց՝ առած դարձած տեղերից բերում է.— «Ври, да знай же мѣру». այսինքն՝ հայերէն կարելի է այսպէս թարգմանել. «Ստիր, բայց չափը գիտցիր», կամ ստիր. բայց չափը պահիր. Ինչ հիանալի դարձուածք է, և միթէ այդ կարելի է թարգմանել» (?!).

Ուրիշ բան է, եթէ հայերէն ասենք—«գլուխդ քարովն ես տալի», «ականջից բամբակը հանիր», բուրդդ կը գզեմ», «խելքից զօր մի տալ», «աչքս ճանապարհին է», «ձեռքիս միջովս է գալի», «ականջդ կանչի» և սրանց նման շատերը։ Սրանց չի կարելի բառացի թարգմանել, որովհետև սոքա հայկականութիւններ են (arménisme), այլ պէտք է ուրիշ լեզուի մէջ սրանց համապատասխան դարձուածքներ որոնել։ Իսկ թէ «Ври, да знай же мѣру» կամ «Да умный человѣкъ не можетъ быть не плутомъ» (այո, խելօք մարդը չի կարող չը լինել պլուտ *)—ինչ հիանալի դարձուածքներ են և ինչ անթարգմանելի բան կայ այդտեղ, չենք հասկանում...

---

*) Տես «Մեղու» № 128.

*) «փորձի» պ. խմբագիրը «փորձը» հրատարակելուց առաջ ինչ «գրականական գործունէութեամբ» էր յայտնի ընթերցող հասարակութեան. . .

*) «Горе отъ ума»-ի թարգմանութիւնը օտար լեզուներով.

*) Պլուտ բառը գործ են ածում Հա-

լինելու։ Աւստրիա-Ունգարիայի շահերի դէմ չէ Հայոց խնդրի Հայերի համար յաջողութեամբ լուծուիլը։ Չենք կարծում, որ այդ խնդրի մասին կայացած ժողովում աւստրիական դեսպանը ընդդէմ մի բան յայտնէ. բայց թէ Աւստրիա-Ունգարիան զէնքի չի դիմել կամ եռանդով չի աշխատիլ պաշտպանել Հայոց խնդիրը—այդ հաստատ է. նա բոլորովին կը հետեւի այդ խնդրումը Գերմանիային, և ամենից աւելի դատապարտուած է իւր շահերը պաշտպանելու։

(Կը շարունակուի).

Ս. Ս.

* * *

«Новости» լրագիրը իր մի առաջնորդող յօդուածում Ալժիրիայի խռովութեան մասին գրում է.—Ալժիրիայի ապստամբութիւնը Թունիսի խռովարար շարժողութեան հետ միասին շատ տխուր խրոզութիւն է և ֆրանսիական հասարակութեան մի մասի մէջ ցաւակցութիւն է զարթեցնում այն բանի համար, որ ընդհանրապէս պատերազմ ակեցին և հիւսիսային Աֆրիկայի մահմեդական ազգաբնակութեան վտանգաւոր շարժողութեան առիթ եղան։ Եւ յիրաւի՝ Ալժիրիայի և Թունիսի խռովութիւնը տարածվեցաւ դրացի Ֆէց, Մարոկկօ, Տրիպօլիս երկրները, այնպէս որ ներկայումս ամբողջ ցամաքի ամբողջ հիւսիսային մասը յուզման մէջ է։

Ալժիրիայի ապստամբ արաբների առաջնորդ Բու-Ամէնան արդէն կարողացել է աւանդական անձնաւորութեան կերպարանք առնել իրան։ Բոլոր ցեղերը հաճութեամբ հնազանդում են նրան, և ֆրանսիական զինուորական իշխանութիւնները բոլորովին անզօր են գըտնվում այն մարդու դէմ, որ դիւթական ազդեցութիւն ունի իւր ցեղակիցների վերայ, որոնք սրա մէջ իրանց սուրբը և առաքեալի ներկայիչն են տեսնում։ Բու-Ամէնան այնպիսի անսովոր ժողովրդական (սակայն այս խօսքը բաւական զօրեղ չէ արաբների Մահամէդի դեսպանի վերայ ունեցած համակրութիւնը արտայայտելու) ունի բոլոր աֆրիկական ցեղերի առաջ, որ Ֆրանսիայի տեղականներից կազմուած ալժիրական զօրքերը վճռողաբար բացասում են նրանց հետ կռուելու։ Նորերս ապստամբների մի բազմաթիւ խումբ նոյն իսկ էմիրի առաջնորդութեամբ ֆրանսիական զօրքերով շրջապատուեցաւ, և նորա կորուստը անխուսափելի էր։ Այն ժամանակ Բու-Ամէնան քաջութեամբ առաջ գնաց, և բոլոր ալժիրական զօրքերը իրանց զէնքերը վայր ձգելով ծունկ իջան և սրբի օրհնութիւնն էին խնդրում, որը յետոյ ազնիւ հպարտութեամբ իր զօրքերի առաջ կանգնած անցաւ ֆրանսիական բանակը ամենեւին ընդդիմութեան չը հանդիպելով։

Բայց ընդհանրապէս դատելով ապստամբների համարձակ առաջնորդը վճռել է իւր գործողութեանց շրջանն ընդարձակել և իր գործի աւելի յաջողութեան համար ինքը ծածկվում է։ Կոնստանտինից ստացուած հեռագիրներին նայելով Բու-Ամէնան հրաւէրով դարձաւ Մարոկկօյի սուլթանին աֆրիկական շարժողութեան գլուխն անցնելու։ Սիդի Մահամմէդը, որը վաղուց արդէն պատուասիրութիւնից տանջվում է, կ'ջանայ օգուտ քաղել այս հաճելի հրաւէրից, մանաւանդ որ խալիֆան, ինչպէս յայտնի է, դիտաւորութիւն ունի Մարոկկօյի մէջ նոյն դերը խաղալու, ինչ որ Ֆրանսիան Թունիսում խաղաց։

⁂

Կ. Պօլսից հեռագրում են Վիէննայի «Polit. Corr.» յուլիսի 5-ից, որ զինուորական նախարարը բոլոր գաւառների նահանգապետներին հրաման է գրել արձակելու բոլոր պահեստի զօրքը և նրանց զգեստները և զէնքերը ուղարկել զինուորական շտեմարանները։ Ուրիշ տեղեկութեանց նայելով Դուռը վճռել է տաճկա-պարսկական սահմանի վերայ ուղարկել արտաքոյ կարգի յանձնաժողով, որը խիստ քննութիւն կ'անի պարսիկների և հայերի գանգատների մասին քրդերի յարձակումների վերաբերութեամբ, որոնց բանակները նրանցից հարկ են առնում։

⁂

Վիէննայից, յունիսի 27-ից (9-ից) հեռագրում են, որ իտալական լրագրերը հաղորդում են, թէ գերմանական և աւստրիական կայսրների Զալցբուրգի տեսակցութիւնը, որ երևի օգոստոս ամսի սկզբին կը կայանայ, նպատակ կ'ունենայ Ռուսաստանի դէմ ուղղուած համամիտ քաղաքականութեան հանելու մշակութիւնը։

⁂

Սկուտարիից, յունիսի 27-ին (յուլիսի 9-ից) հաղորդում են, որ Միտրօվիցի շրջակայքում այժմ կենդրոնացնում են բաւական զօրեղ տաճկական գունդ, որին միանում են Յունաստանին զիջած երկրներից հեռացող զօրքերը։

⁂

Թունիսի, յունիսի 26-ից (յուլիսի 8-ից) հաղորդում են, որ նոր զօրքերին հրամայված է դէպի Սֆակս ուղղուել։ Լուրերին նայելով Թունիսի մէջ խռովութիւնը սաստկանում է։

⁂

Ուաշինգտոնից յունիսի 26-ից հաղորդում են, որ նախագահ Գարֆիլդի առողջութիւնը լաւանում է։ Յունիսի 26-ի առաւօտեան բժիշկների տուած ծանուցումից երևում է, որ հիւանդի առողջութիւնը շատ բարեյաջող է։

«ՄԵՂՈՒ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

ՓԱՐԻԶ, 5-ին յուլիսի։ Երեկ փառաւոր յարձակումից յետ ֆրանսիական զօրքերն առան Սֆաքսը, ուր այժմ գտնվում է զօրեղ զօրաբաժինը։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԻՐԺԱ

6-ին յուլիսի.

Արք. բանկ. 1-ին	95	62
— — 2-րդ	94	25
— — 3-րդ	94	75
— — 4-րդ	94	62
Վիճակահ. 1-ին	221	75
— — 2-րդ	220	75
Արև. փոխառ. 1-ին	92	50
» » 2-րդ	92	12
» » 3-րդ	92	12
Լոնդոն	25	06
Բէռլին	215	25
Փարիզ	265	50
Ոսկի	7ռ.	78 կ.

Բիրժայի վիճակը ամուր է։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՂԱՐԱՔԼԻՍԻՑ մեզ հաղորդում են.—Լսում ենք, որ դպրոցի ուսուցիչներից մէկը դիտաւորութիւն ունի ձմեռվան ժամանակ հասակաւոր մարդկանց գրել կարդալ սովրեցնել։ Ցանկանում ենք յաջողութիւն։

—Նալբանդլի գիւղի սարերում մի խոշոր պատերազմ է եղել գողերի և հովիւների մէջ։ Մի քանի Թուրքեր մի ամենամութ գիշեր գալիս են, որ տաւար գողանան. հովիւները սկսում են ճակատամարտել—զարհուրելի հրացանաձգութիւն. փոքր ժամանակից յետոյ դադարում է պատերազմը. երբ առաւօտը լուսանում է, տեսնում են մեր քաջ հովիւները, որ իրանց հակառակորդներից մէկը վայր ընկած և գլուխը կիսակտրել. յետոյ յայտնում են եղելութիւնը տանուտէրին, իսկ նա ոստիկանութեանը և հովիւներին ինչպէս, ասում են, բռնել են։ Ասում են, որ գլուխը ուզեցել են կտրել տանել նրա համար, որ նրան ոչ ոք չը ճանաչի, բայց չի յաջողվել։

⁂

«Կովկաս» լրագիրը հաղորդում է, որ ուսման ձգտումն երևում է Թիֆլիզի սիւննի մահմէդականաց մէջ, որոնք կազմել են «բարեգործական ընկերութիւն», որի կանոնադրութիւնը հաստատված է կառավարութիւնից և նպատակ ունի ուսումն և կրթութիւն տարածել տեղիս մահմէդականաց մէջ։

⁂

Թիֆլիսից սկսած մինչև Նուխի ամեն մի ճանապարհորդին գրաւում են այս տարվայ հնձի առատութիւնը, այնպէս որ շատ տեղերում մեծ կարօտութիւն կայ հնձող մշակների, ինչպիսի են Ալազան գետի ափի դաշտերը որ 35—40 վերստ տարածութեամբ ցորենի արտեր են։ Գիւղացիների ասածին նայելով, այս տարուան պէս առատ հունձ մի քանի տասնեակ տարուց աւելի է՝ որ չեն տեսել։

⁂

ՆՈՒԽԻՑ մեզ հաղորդում են.—Նուխվայ հոգեւոր դպրոցը քսան տարի գոյութիւն ունենալուց յետ, վերջապէս այս տարի փակուեց բոլորովին, շնորհիւ նորա արիաջան հոգաբարձուների։ Հոգաբարձուներից մէկը պ. Թ. Շահրադեանց ընտրութեան ժամանակ ամենատեսակ միջոցներ գործ դրեց, որ ինքը հոգաբարձու ընտրուի, որև յաջողուեց։ Բայց ինչ կ'ասես ընթերցող, որ այս պատուելին հոգաբարձու լինելից յետ, մի անգամ ուսումնարան ոտք չը դրել, ասում են հէնց ուսումնարանի փակման պատճառն էլ այս պարոնն եղել։

—Ուսումնարանի վերականգնման համար մի քանի կիւրակէ շարունակ ժողովներ է լինում շնորհիւ մեծ. պ. Եպիսկոպոսեանի, բայց ժողովականների սակաւութեան պատճառով, դեռ մի որոշ վճիռ չեն արել յօգուտ դպրոցի։ Միմիայն ներկայ եղողներից ինչպէս ասում են 150 ռուբլու չափ փող է ժողովել մեծ պարոնը. վաղը նոյնպէս ժողով է լինելու, որի մասին յետագայ փոստով կը գրեմ։

⁂

ՆՈՒԽԻՑ մեզ գրում են.—Մի քանի շաբաթ է ահա, որ տեղական Թուրքերը իրար տուն են այրում իրանց ոխը հանելու դիտաւորութեամբ։ Գիշեր չի մնում, որ մի երկու տուն չ'այրվի. երբեմն պատահում է և մարդասպանութիւն։ Մի քանի օր է, ինչ որ սկսել է այստեղ մի տեսակ հիւանդութիւն երեւալ, այն է առողջակազմ մարդ, յանկարծ ուշաթափ է լինում և մեռնում։ Ոստիկանութիւնը չափազանց թոյլ է իւր գործունէութեան մէջ։

⁂

Լսում ենք հաստատ աղբիւրներից, որ հայ թատրոնական մասնաժողովը պ. Պ. Ադամեանի հետ նորոգել է իւր պայմանն առաջիկայ տարուան համար։ Պայմանագիրն անփոփոխ է մնացել։ Ուրեմն բոլոր լուրերն, որ տարածված էին այդ մասին սխալ են և Թիֆլիզի հայ բեմը առաջիկայ տարին էլի կ'ունենայ իւր տաղանդաւոր դերասանին։

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

Գալով պ. Կ. Տէր-Աստուածատրեանի թարգմանութեանը՝ յօդուածը գտնում է, որ նա նոյնայնութեան զոհում է միտքը, աղաւաղում է լեզուն, շատ անգամ մէկ տողի տեղ՝ երկու տող և աւելի բառեր է գործ ածում։ Յօդուածի մէջ բերած են դրա ապացոյց թարգմանութիւնից օրինակներ։ Պէտք է ասել, որ անմտութիւն է պահանջել, որ ոտանաւոր թարգմանութիւնը թարգմանելու ժամանակ թէ՛ մտքով և թէ՛ բառերի քանակութեամբ միանգամայն համապատասխանէ բնագրին։ Առէք Մօլիէրը, Բայրօնը, Հէյնէն և այլն և համեմատեցէք թարգմանութիւնների հետ։

Թարգմանիչը պարտաւոր է հոգին և միտքը պահպանել, իսկ բառերի որքանութիւնը արդէն իր բանն է, մանաւանդ՝ որ թարգմանութիւնը ոտանաւորով է և պ. Կ. Տէր-Աստուածատրեանը պահպանել է իսկական միտքը այն տեղերում, ուր բառացի թարգմանութիւնը անիմաստ բան կը լինէր։ Ինչ վերաբերում է լեզուի խոտորումներին՝ ինքը յօդուածը խոստովանում է, որ այդ անում են մեզանում աշխարհաբար արձակ գրուածքի մէջ—ուր մնաց ոտանաւորը, որ հազար անգամ աւելի դժուար է։ Ինչպէս որ մեզ յայտնի է, պ. Կ. Տէր-Աստուածատրեանը Գրիբօեդովի կոմեդիան թարգմանել է բեմի համար և այնչափ ժամանակ չէ ունեցել, ինչպէս հարկն է մշակել նրան։ Ուստի պ. Կ. Տէր-Աստուածատրեանը իւր «Խելքից Պատուհասը» (որին «փորձը» ձգտում է արգելքներ դնելու) տպագրութեան անցնելու համար՝ բնական բան է, որ աւելորդութիւնները կը կրճատէ և լեզուն աւելի կը մշակէ։ Մենք յուսով ենք, որ պ. թարգմանիչը չի յուսահատուիլ, այլ անշուշտ կ'անէ այդ։ Բայց հէնց հիմակուանից կարող ենք ասել, որ ոչ մէկ աշխարհաբար ոտանաւոր թարգմանութիւն այնպէս սահուն, բնական, դիւրըմբռնելի, ընթերցանելի և գեղեցիկ չէ, ինչպիսին է պ. Տէր-Աստուածատրեանի թարգմանութիւնը։

Մեր մէջ բնականապէս հարց է զարթնում. ինչո՞ւ հէնց «Խելքից պատուհասի» թարգմանութեան վերայ սկսեց «փորձը» խօսել... ինչո՞ւ մինչև օրս լռեց և լռում է նա այն հեղինակների թարգմանութիւնների մասին, որոց մօտ Գրիբօեդովը մի թզուկ է։ Ինչո՞ւ «Խելքից Պատուհասի» հայերէն ներկայացման մասին միայն խախտեց «փորձը» իւր լռութիւնը։ Ընթերցող հասարակութեան յայտնի է, որ Շիլլէրի «Դօն Կարլոսի» թարգմանութիւնը վաղուց արդէն տպուած է «փորձի» մէջ Արդեօք մինչև օրս երևացել է «փորձի» մէջ դրա վերայ մի որևիցէ կրիտիկա։—Ամենևին ոչ. 1879 թուականին, եթէ չենք սխալվում, Թիֆլիզի հայ բեմի վերայ խաղացին ու. Սաթինիկ-Ջմշկեանի բենէֆիսին «Դօն Կարլոսը» «փորձի» խմբագրի առաջարկութեամբ։ Թարգմանութիւնը մինչև այն աստիճան անճոռնի էր, որ դերասանները բառերի տակ բոլորովին ճնշվում էին, իսկ հասարակութիւնը ձանձրացած այդ ներկայացումից սկսեց չը յաճախել հայ ներկայացումներին, որոնց մինչև այն օրը այնպիսի եռանդով դիմում էր։ Այսուամենայնիւ «փորձի» մէջ այդ մասին չ'երևեցաւ մի որևիցէ ռեցենզիա։ Շիլլէրի պէս մի «անման» բանաստեղծի հեղինակութիւնները, որոնք միւս «անման» բանաստեղծների մօտ յայտնի փայլում են իրենց իդէալ, նուրբ, աստուածային վսեմ մտքերով, զգացմունքներով և դրանց համեմատ Շիլլէրին յատուկ զգայուն և քնքուշ լեզուով—թարգմանուել են հայերէն այնպիսի մի այլանդակ, գռեհիկ, կոպիտ, ծանր ոճով, որ միայն բախտաւոր կարող ենք համարել նրանց, որոնք ամենևին ծանօթ չեն Շիլլէրի հետ։ Զարմանալի բան է, որ իրարից ետև սնկի պէս «փորձի» մէջ բուսնում էին անման կլասիկների կմախքները, բայց «փորձը» դրանց համար կրիտիկոս չ'ունէր, մի գուցէ, ինչպէս «փորձը» ասում է, «ազգասիրութիւնից կամ աւելի անգիտութիւնից» կամեցած լինէր իրեն արգարացնել։ Ի՞նչ ենք տեսնում վերջին ժամանակներումս ներկայացրին հայ բեմի վերայ Շէքսպիրի «անման» Համլէտի» թարգմանութիւնը. բայց ո՞ւր մնաց այդ տիեզերահռչակ ողբերգութեան վերայ կրիտիկան և ռեցենզիան։—Ոչինչ չ'երևեցաւ այդ մասին «փորձի» մէջ։

Մենք էլի կրկնում ենք մեր հարցը. ինչո՞ւ հէնց պ. Տէր-Աստուածատրեանի համար «փորձը» խախտեց իւր լռութիւնը։ Դրա պատասխանը մենք ընթերցողին կը տանք, որովհետև մեզանում ամեն բան անձնականիցն է սկսվում և անձնականով վերջանում։ Պ. Տէր-Աստուածատրեանի անձնաւորութիւնը ինչ ինչ պատճառներով դուր չէ եկել երևի «փորձի» պ. խմբագրին։ Պ. Տէր-Աստուածատրեանը «ուրիշի աշխատանքից» տէր դառնալու անընդունակ՝ դատարկ պաշտօնների համար մեծ գումարներ ստանալու բախտը չ'ունի և միևնոյն ժամանակ նիւթականապէս կարօտութեան մէջ՝ համարձակվում է իւր սեպհական կարծիքը, իւր համոզմունքը ունենալ իրեն շրջապատող իրերի և անձինքների մասին։ Լաւ մարդիկ են մեր հայերը, խօսք չը կայ։ Այնտեղ հեռու, հեռու, Ասիայի մութ խորքերումը կարօտեալներին օգնում են, որպէս զի աշխարհը իմանայ իրենց բարի գործը, բայց իրենց մօտիկ, թշուառութեան մէջ հայ մատենագրութեան համար աշխատող երիտասարդին խեղդում, սպանում են..... Բաւական չէ, որ մանր զաւակներով շրջապատած, բոլորովին զուրկ կենսական միջոցներից՝ պ. Տէր-Աստուածատրեանը ընտանեօք հանդերձ կըրում է կեանքի ամեն տեսակ դառնութիւնները—բարոյապէս էլ նրան խեղդել են ուզում, որովհետև հայ գրականութեան համար է աշխատում.... և դեռ մենք գանգատվում ենք, որ մեր մէջ մարդիկ չեն յառաջանում, որ մեր գրականութիւնը աղքատ է մնում։ Մենք էլ ազգ ենք, սիրտ ունինք և գիտենք մարդիկ գնահատել, ինչպէս չէ։ Ով որ «փորձի» մէջ «Խելքից Պատուհասի» հայերէն ներկայացման վերայ ռեցենզիան (*) կարդացել է՝ նա տողերի մէջ շատ և շատ բաներ կը գտնէ։ Այդ ռեցենզիան էլ ծայրէ ի ծայր դուրս է ժայթքում անձնական կրքերից, որ իսկապէս ոչինչ նշանակութիւն չ'ունի հասկացողի մօտ. բայց միանգամայն ցաւալին այն է, որ մեզ մօտ ամեն բանին անձնականութիւնն է իշխում և ամեն բան զոհվում է անձնականութեան...

Ž. Z.

յատանում և ռուսերէնից չի կարող առնուած լինել, որովհետև Թիֆլիսի հայերին, որոնք աւելի մօտիկ են ռուսներին՝ այդ բառը անծանօթ է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խնդրում եմ այն ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, որոնք կը ցանկան առաջիկայ սեպտեմբերից մանկավարժութիւն անել ԵՐԵՒԱՆԻ և ԿԱՐՍԻ վիճակներում, բարեհաճեն յայտնել ինձ իւրեանց պայմանները և դասախօսութեան առարկաները: Հասցէս՝ Վաղարշապատ:

Պաշտօնակատար Թեմական վերատեսչի՝

Գ. Գաւշեանց.

* * *

Խնդրում եմ ԵՐԵՒԱՆԻ և ԿԱՐՍԻ վիճակների գիւղական հոգաբարձութիւններից առաջիկայ սեպտեմբերից հարկաւոր եղած ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ համար դիմել ինձ, յայտնելով մանրամասնօրէն իւրեանց պայմանները, վճարելիք ռոճիկի քանակութիւնը, ուսուցելիք առարկայքը, դասերի որքանութիւնը ևայլն:

Պաշտ. Թեմական վերատեսչի՝

Գ. Գաւշեանց:

Կ. պօլսեցի ԱՆՏՕՆ ՔԻՐԻՄԵԱՆՑ ցանկանում է ունենալ դասեր ընտանիքներում Ֆրանսիական և Հայ լեզուներից: Ցանկացողք կարողեն դիմել խմբագրութեանս, յիշեալ երիտասարդի հասցէն իմանալու համար: Նա պատրաստ է և դուրս երթալ, եթէ պայմանները ձեռնտու կը լինին: Կարող է նոյնպէս և առևտրական հաշուապահ լինել և թղթակից նոյն լեզուներով:

Լոյս տեսաւ.

Տ. Յ. Նազարեանի հրատարակութիւնների երրորդ գրքոյկը՝

«ԵՐԿՈՒ ՄԱՆՐԱՎԷՊ»

(«Լրտես տղան» և «Մէլ Իւգենի ընծան»)

ԱԼՖՈՆՍ ԴՕԴԷՅԻ

գինն է 15 կոպէկ.

Հասցէ՝ Шуша Тиграну Назарянцъ.

7—7

Վարձով տրվում է ՆՈՐԱՇԷՆՈՒ ՔՈՒՉՈՒՄ Հ. Էնֆիաճեանցի ՏԱՆԸ ՄԻՋԻՆ ՅԱՐԿՈՒՄ հինգ սենեակներից բաղկացեալ բնակարան պատկանեալ բոլոր յարմարութիւններով:

2—8

Խնդրում եմ ՎՐԱՍՏԱՆԻ եւ ԻՄԵՐԵԹԻ Թեմիս պարագային հոգևոր ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ վարչութիւններին մինչև առաջիկայ օգոստոսի 1-ը հաղորդել ինձ, եթէ ունին որ և իցէ առարկայից ուսուցչի կարօտութիւն. իսկ այն անձանց, որոնք ցանկանում են ծառայել յիշեալ ուսումնարաններում հրաւիրում եմ փութով յայտնել ինձ իւրեանց ցանկութիւնը բերանացի կամ գրաւոր:

Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

ՈՒՍՈՒՑԻՉ

ԱՆՈՒՆՈՎ

ԵՐՐՈՐԴ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ

ՏԱՐՈՒԱՅ

ՄԵՐ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Յանձնուեցան մամուլին և լոյս կը տեսնեն օգոստոսին Այդ դասագրքերը կրում են բոլորովին նոր հոգի և նոր ուղղութիւն:

Յ. Նազարեանց.

7—8

ОТКРЫТА ПОЛУГОДОВАЯ ПОДПИСКА

на еженедѣльный журналъ

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

(ИЗДАВАЕМЫЙ ВЪ Г. ТИФЛИСѢ)

Съ 1-го іюля 1881 года по 1-е января 1882 года.

Цѣна за полгода 6 руб.

Кромѣ того можно подписаться на 3 мѣс.—3 р. 20 к., на 1 мѣс.—1 р. 20 к. Подписка принимается съ 1 числа каждаго мѣсяца и не далѣе конца года. Разсрочка во взносѣ допускается по соглашенію съ администраціею журнала.

Подписка принимается исключительно въ администраціи журнала, въ гор. Тифлисѣ, близь Головинскаго пр., по Безъименному пер., въ домѣ Тамамшева.

ИЗДАТЕЛЬ *А. С. Френкель.* РЕДАКТОРЪ *А. В. Степановъ.*

4—4

ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ

На полгода въ Тифлисѣ 2 рубля.

Для иногородныхъ . . . . 4 р.

На ДВОРЦОВОЙ улицѣ въ домѣ САРАДЖЕВА.

6—6

Վարժապետ և վարժուհի ամուսիններ համաձայն են գաւառները գնալ, ուսուցչութեան պաշտօնով. Հասցէն՝ Տփխիս, կենդրոնական գրավաճառանոց:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ Հոգաբարձութիւնը յայտնելով V և VI ԴԱՍԱՏԱՆՑ նախկին ուսումնաւարտ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, թէ առաջիկայ սեպտեմբերից բացվում է VII դասատունը ուսուցչութեամբ մանկավարժ պ. ԱՌԱՔԵԼ ԲԱՀԱԹՐԵԱՆ, հրաւիրում է նոցանից ցանկացողներին առանց հարցաքննութեան մտնելու VII դասատունը ուսանելու, ուր ուսման ընթացքը աւարտողը կըստանայ մրցանակիր:

Ցանկացողները իրանց յօժարութիւնը կարող են յայտնել մինչև առաջիկայ օգոստոսի 25-ն պ. տեսչին դպրանոցիս գրաւոր կամ բերանացի:

Հոգաբարձու Գ. Գորգանեանց.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿ.

Ապրիլի 15-ից մինչև ցնոր կարգադրութիւն.

վճարում է.

1. Ընթացիկ հաշւով.
   - ա. Հասարակ . 4%
   - բ. Պայմանաւոր 4½%
2. Գումարների աւանդ.
   - ա. Մինչև ցպահանջ 4%
   - բ. 6 ամսով . 5½%
   - գ. Մի տարով . 6%
   - դ. Երկու տարով և աւելի 6%

վերցնում է.

1. Ջեղջումն առևտրական մուրհակների 6 ամսով . . 7%
2. Ջեղջումն մուրհակների, ապահովութեամբ անշարժ կայից . 7%
3. Արժէթղթերի գրաւականով ընդունելիք պետական բանկայից 6 ամսով . . 7%
4. Մասնաւոր ընթացիկ հաշիւ.
   - ա. Ապահոված տոկոսաբեր թղթերով 7%
   - բ. Մուրհակներով ապահովացրած երկու բաւարարութեամբ. 7½%
5. Ջեղջումն կտրօնքների և թղթադրամների . . 7%

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

վճարում է.

1. Ընթացիկ հաշւով 4%
2. Մինչև ցպահանջ աւանդի . . . 4%
3. 6 ամսական աւանդի 5%
4. Երկու և աւելի տարով աւանդի . 6%

վերցնում է.

1. Ջեղջումն առևտրական մուրհակների մինչև 6 ամիս 8%
2. Արժէթղթերի գրաւականով.
   - ա. Ընդունելիք պետական բանկայից 7%
   - բ. Անընդունելիք պետական բանկայից 8%
3. Մասնաւոր ընթացիկ հաշիւներ՝
   - ա. Ապահովացրած արժէթղթերով . 7%
   - բ. Ապահովացրած մուրհակներով 8½%

Յանձնարարութիւններ 1/16% —2%

ՓՈԹԻ—ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

Թիֆլիսից դէպի Փօթի դուրս է գնում.

	Ժամեր.			Տեղերի գինը.		
	առաւ.	կէս օր.	երեկ.	I կլ.	II կլ.	III կլ.
				ռ. կ.	ռ. կ.	ռ. կ.
Թիֆլիզ.	9. 21	12. 56	5. 18			
Մցխէթ	10. 11	1. 57	6. 27	1. 13	85	44
Գօրի .	11. 58	4. 35	9. 43	4.	3.	1. 53
Միխայլ.	1. 29	6. 45	11. 57	6. 30	4. 73	2. 42
		գիշեր				
Ռիօն .	6. 56	1. 45		11. 25	8. 44	4. 31
Փօթի .				16. 31	12. 24	6. 26

Փօթիից դէպի Թիֆլիզ.

	Ժամեր.			Տեղերի գինը.		
	Առաւ.	երեկոյ.	գիշեր.	I կլ.	II կլ.	III կ.
				ռ. կ.	ռ. կ.	ռ. կ.
Փօթի .	9. 3	10. 22				
Ռիօն .	12. 13	3. 30		5. 13	3. 84	1. 97
Միխայլ.	5. 39	10. 1	1. 37	10. 1	7. 51	3. 84
		կէսօր.				
Գօրի .	7. 5	12. 20	4. 8	12. 33	9. 24	4. 73
Մցխէթ	8. 50	3.	7. 59	15. 19	11. 39	5. 82
Թիֆլիս				16. 31	12. 24	6. 26

Երկաթուղու գնացքը Թիֆլիզից Փօթի—Առաւօտեան 9 ժ. 21 ր., որ կը հասնի Փօթի երեկ. 9 ժ. 50 ր. կէսօրից յետոյ 4 ժ. 30 ր., որ կը հասնի Փօթի առաւօտեան 10 ժ. 7 ր.:

ՉԵՆ ՀԱՍՑՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

6 յուլիսի.

Գէնէրալ Լազարևին, Օլգա Եազուբովիչին, Նիկոլայ Փիրումովին, պրախա Կորանկըրին:

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կուկիայում, Սիմէօնովսկի փողոցի վրայ, Հախվերդեանի տանը:

Հիւանդներին ընդունում են ամէն օր, նաև տօն օրերին առաւօտեան ժամի 9—11. ԼՈՒՆԿԵՎԻՉ—աչքերի, կաշուի և վեներական հ., ԲՈՒԴԿՕՎՍԿԻ — կանանց և ներքին հ., ժամի 11—1., ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—խիրուրգիական և վեներական (սիֆիլիտական) հ., ՇԱՀԱՁԻԶԵԱՆՑ — ներքին հ. ժամի 5—7. ՊԱՎԼՕՎՍԿԻ--ջղային, հոգեկան և ներքին հ., ՈՒՇԱԿՈՎ—երեխայոց հ., ԾԱՂԿԱՀԱՏՈՒԹԻՒՆ առաւօտեան ժամի 9—11, չորեքշաբթի և շաբաթ օրերը երեկոյեան ժամի 7—8 ընդհանուր ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ: Հիւանդանոցը ունի գիշերապահ բժիշկ և ընդունում է ԳԻՇԵՐՕԹԻԿ հիւանդներ:

ԱՂՔԱՏՆԵՐԻՆ անվարձ է բժշկական խորհուրդը և դեղը:

Հիւանդանոցում բընակվում է բժիշկ ՆԱԻՍԱՐԴԵԱՆԸ:

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը սկըսվում է ժամը 9-ին և շարունակվում է մինչև 1 կէսօրից յետ:

Երկուշաբթի.—Գավրոնսկի՝ մանկաբարձական և կանանց հիւանդութեանց համար, Գորալևիչ և Լիսիցեվ՝ ներքին հ., Ռոտինեանց՝ կանանց և երեխայոց հ., Բաբայեան՝ ջղային և ներքին հ., Շտեմբորսկի՝ վեներական և կաշուի հ., Քիւչարեանց 1-ն՝ խիրուրգիական և աչքի հ.:

Երեքշաբթի.—Մինկէվիչ՝ խիրուրգիական հ., Բէյեր՝ աչքի հ., Բախուտով՝ մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Լիսիցեվ և Վերմիշեվ՝ ներքին հ., Պետրովսկի վեներական հ.:

Չորեքշաբթի.— Կրասնօղլեադով և Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց 2-դ՝ և Շտեմբորսկի սիֆիլիտիքական և կաշուի հ.:

Հինգշաբթի.— Գավրոնսկի՝ մանկաբարձական և կանանց հ., Բէյեր՝ աչքի հ., Ռոտինեանց՝ կանանց և երեխայոց հ., Բաբայեան՝ ջղային և էլեքտրականութեամբ բժշկելի հ. (электротерапія), Լիսիցեվ եւ Պետրովսկի՝ ներքին հ., Քիւչարեանց՝ սիֆիլիսի և սեռական հ.:

Ուրբաթ.—Մինկեվիչ՝ խիրուրգիական հ., Բախուտով՝ մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Կրասնօղլեադով՝ Լիսիցեվ և Վերմիշեվ՝ ներքին հ., Շտեմբորսկի՝ վեներական և կաշուի:

Շաբաթ. — Լիսիցեվ՝ ներքին հ., Բէյեր՝ աչքի հ., Բաբայեան՝ ջղային և ներքին հ., Քիւչարեանց 2-դ՝ կանանց և ներքին հ., Պետրովսկի՝ վեներական հ.:

Օրբէլով ատամի հ. ընդունում է իր մօտ խեղճ հիւանդներին ամենայն ժամանակ բժշկանոցի տոմսակով:

Դիրեկտոր բժշկանոցի բժ. Լիսիցեվ:

ՓՈՍՏ

Թիֆլիզի փոստի կառավարութեան մէջ ընդունվում են և տըրվում, ամեն տրակտի և ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստի իրեր, ամենայն օր, բացի տօն օրերը, առաւօտեան 8 ժամից մինչև 1 կէսօրից յետ: Բացի դրանից ամեն օր, բացի կիւրակէ և տօն օրերը, առաւօտեան ժամը 7-ից մինչև 8 և 3-ից մինչև 7-ը կէսօրից յետ, իսկ կիւրակէ և տօն օրերը 7 ժամից մինչև 10 առաւօտեան և 3-ից մինչև 7 կէսօրից յետ, ընդունվում են և տըրվում հասարակ նամակներ:

Ռուսաստանի և արտասահմանի փոստը դուրս է գնում Թիֆլիսից ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերը, Փօթիի տրակտը (երկաթուղու միջոցով) ամեն օր, Երևանեան կառախնը երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ, Նուխուինը և Կախէթինը կիւրակէ և չորեքշաբթի, Բագուինը, Ելիսաւետօպոլի վերայով երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Նամակներ.

Քաղաքային փոստով նամակն արժէ 3 կ.:

Բաց նամակ օտար քաղաքներ 3 կոպ.:

Ռուսաստանի և Եւրոպայի բոլոր երկիրները ծածկած նամակը արժէ (1/6 լոտի ծանրութեամբ) 7 կ.:

Պատուիրած նամակների գինը կրկնակի է:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 7-го іюля 1881 г. Типографія Ааб. Энфіаджіанцъ и К. Տէր խմբագիր Մ. Ռոստոմեանց.